menq PRODUCTION
ՀՀ, ք. Երևան, 0015, Արգիշտի փող., 7/4 շ., բն. 35
093 999 390, 055 099 013
menqproduction@gmail.com
menq.org

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Menq Production» սիրողական ինտելեկտուալ մրցաշարի

1. Ընդհանուր դրույթներ

1.1. «Menq Production» սիրողական ինտելեկտուալ մրցաշարը տեղի է ունենալու 2023թ. նոյեմբերի 22-ին:
1.2. Սույն Կանոնադրությունը և նրա փոփոխությունները հաստատվում են մրցաշարի կազմակերպչի որոշումով:
1.3. Կազմակերպիչը իրավասու է որոշում ընդունել մրցաշարի հետ կապված կազմակերպչական և խաղային հարցերի վերաբերյալ:

2. Փառատոնի մասնակիցները

2.1. Թիմերի կազմում ընդգրկվում են բացառապես ՀՀ բանկերի, վարկային և վճարահաշվարկային կազմակերպությունների աշխատակիցները՝ մինչև մրցաշարի մեկնարկման նախորդող ամսվա 1-ը աշխատանքի ընդունված հաստիքային աշխատակիցները, մրցաշարի ընթացքում թիմերի կազմը փոփոխության ենթակա չէ: Տվյալ պայմանները հաստատվում են թիմերի կողմից ներկայացված «Թիմի մասնակցության հայտի» և թիմերի կազմում ընդգրկված աշխատակիցների անձնագրի պատճեների հիման վրա: «Թիմի մասնակցության հայտ»-երը ներկայացվում են մրցաշարի կազմակերպչին մրցաշարի մեկնարկման օրվանից երկու օր առաջ:

2.2. Մրցաշարին խաղացողի կարգավիճակով կարող են մասնակցել տվյալ բանկի, վարկային և վճարահաշվարկային կազմակերպության բոլոր աշխատակիցները՝ բացառությամբ այն անձանց, ովքեր վերջին 2 տարվա ընթացքում մասնակցել են հայկական «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» հեռուստատեսային խաղի մրցութային խաղերին կամ վերջին երկու տարվա ընթացքում մասնակցել են https://rating.chgk.info կայքում ներառված հինգ կամ ավելի մրցաշարի (ս.թ. հոկտեմբերի 23-ի դրությամբ):

2.3. Մեկ թիմի կազմում կարող է ընդգրկված լինել առավելագույնը 8 մասնակից, որից 6ը՝ հիմնական, 2-ը՝ պահեստային: Խաղասեղանի շուրջ միաժամանակ կարող է գտնվել ոչ ավելի, քան 6 և ոչ պակաս, քան 4 խաղացող:

3. Մրցաշարի խաղերը

3.1. Մրցաշարի մրցութային մասը բաղկացած է ինտելեկտուալ երկու խաղից՝ «Գուշակի՛ր մեկ րոպեում» և «Արագ կոճակներ»: «Գուշակի՛ր մեկ րոպեում» խաղին մասնակցում են մրցաշարին հայտավորված 10 (տասը) թիմերը, իսկ «Արագ

կոճակներ»-ին՝ «Գուշակի՛ր մեկ րոպեում»-ի արդյունքներով լավագույն 4 թիմերը (առավելագույնը):

4. Կազմակերպչական դրույթներ

4.1. Մրցաշարին մասնակցելու նպատակով թիմերը մրցաշարի կազմակերպիչին վճարում են մասնակցության գումար հաշիվ ապրանքագրի և/կամ պայմանագրի հիման վրա: Վճարումները կատարվում են մրցաշարի անցկացման օրվանից 3 օր առաջ: Ժամանակին չվճարած թիմը չի մասնակցում մրցաշարին: Տվյալ վճարները չեն վերադարձվում թիմերին, եթե տվյալ թիմը ներկայացրել է մասնակցության հայտ, վճարել է գումարը, սակայն չի ներկայացել մրցաշարի ոչ կազմակերպչի մեղքով:

4.2. Մրցաշարի կազմակերպիչը տվյալ գումարի շրջանակներում պարտավորվում է ապահովել մրցաշարի կազմակերպչական կոորդինացումը, լուսաբանումը և մրցանակաբաշխությունը: